Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանումն իր գործառույթներն իրականացնում է համաձայն Կանոնագրքի 27-րդ հոդվածի:

## 8. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Բանկը կորպորատիվ քարտուղար չունի: Վերջինիս գործառույթները վերապահվում են *Խորհրդի անդամ, Խորհրդի Քարտուղար Լուիզա Պետրոսյանին*: Խորհրդի Քարտուղարը իր գործառույթներն իրականացնում է համաձայն Խորհրդի Կանոնակարգի` հաստատված Ժողովի կողմից, Կանոնագրքի 22-րդ հոդվածի:

## 9. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը ընտրվում է յուրաքանչյուր տարի, մրցութային կարգով` համաձայն գործող կարգի: Որպես 2020թ. աուդիտոր մրցույթում հաղթել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն որը արտաքին աուդիտն իրականացնող անձի պարտականությունները մրցութային կարգով իրականացնում է 2019թ.-ից:

Արտաքին աուդիտն իրականացնող անձի և Բանկի հարաբերությունները կարգավորվում են համաձայն Կանոնագրքի 28-րդ հոդվածի:

Համաձայն Կանոնագրքի 28-րդ հոդվածի, Բանկը ներդրել է չափորոշիչներ` որոշելու արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը Բանկից:

## 10. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բանկի տարեկան հաշվետվությունը ներկայացվել և հաստատվել է Բաժնետերերի ընդհանուր ժողովում` *30.06.2020թ.-ին*
:

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Կանոնագրքի 23-րդ հոդվածով սահմանված ողջ տեղեկությունները և տեղադրված է Բանկի ինտերնետային կայքում` https://aeb.am/media/2020/06/4391.pdf :

Ստորագրված է *18.05.2021թ.*

________________________________

Խորհրդի նախագահ

________________________________

Գործադիր տնօրեն

Հավելված 2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ – «Հետևիր կամ բացատրիր»

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| **Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի (ԲԸԺ) իրավասությունները և բաժնետերերի իրավունքները** | | | |
| 1. | Բանկի կանոնադրությունը և համապատասխան կարգերը նախատեսում են հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը: | Այո | *Կետեր*՝ 6.2-6.20 |
| 2. | ԲԸԺ-ի օրակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը բաժնետերերը ստացել են ԲԸԺ-ից առնվազն 15 օր առաջ: | Այո | Տարեկան ընդհանուր ժողովն անցկացվել է 30.06.2020թ.: ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը, համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգի», ԲԸԺ-ի մասին ծանուցվել են *փոստով/էլ. փոստով/առձեռն տրամադրման միջոցով մինչև 31.05.20թ./համապետական լրագրում («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում) տպագրված ծանուցմամբ*, այն է ԲԸԺ-ից առնվազն *15* օր առաջ. Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել են, ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց հասանելի են դարձել Բանկի ինտերնետային կայքում, Բանկի Գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում: |
| 3. | ԲԸԺ-ի օրակարգն ներառում է քվեարկության դրվելիք հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը, ինչպես նաև Խորհրդի կողմից ԲԸԺ-ի հաստատմանը ներկայացված աուդիտն իրականացնող անձի անունը: | Այո | Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել են, ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց հասանելի են դարձել Բանկի ինտերնետային կայքում, Բանկի Գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| 4. | Բանկի գործող կարգերը, որոնց վերաբերյալ հղում է կատարված կանոնադրությունում, սահմանում են հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում քվեարկել հեռակա կարգով՝ քվեաթերթիկների միջոցով։ | Այո | |
| 5. | Բանկի կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում նշանակել ներկայացուցիչ՝ համաձայն գործող օրենսդրության պահանջների։ | Այո | |
| 6. | Արդյոք բաժնետերերը ԲԸԺ-ում քվեարկում են քվեաթերթիկների միջոցով։ (Այս կարգը կարող է չգործել միայն մեկ բաժնետեր ունեցող ընկերությունների դեպքում)։ | Այո | |
| 7. | Արդյոք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալու ժողովի գումարումից մինչև 10 օր առաջ։ | Այո | |
| 8. | Արդյոք Խորհուրդը ժողովի ժամանակ պատասխանել է բաժնետերերի հարցերին։ | Այո | |
| 9. | Արդյոք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալու ժողովի ժամանակ։ | Այո | |
| 10. | Արդյոք Խորհուրդը պատասխանել է առաջադրված բոլոր հարցերին։ | Այո | |
| Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը | | | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| 11. | Բանկը ունի շահութաբաժինների վճարման կարգ, որը մշակվել և հաստատվել է Խորհրդի կողմից և հրապարակվել է Բանկի ինտերնետային կայքում: | Այո | https://aeb.am/media/2021/04/5492.pdf |
| 12. | Շահութաբաժինների վճարման կարգը ներառում է վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը (payout ratio): | Ոչ | |
| **Խորհուրդը** | | | |
| 13. | Բանկը հիմնադրել է հստակ պարտականություններով և գործառույթներով օժտված խորհուրդ, որի մասին հրապարակված է Բանկի ինտերնետային կայքում: | Այո | |
| 14. | Արդյոք Խորհուրդը կազմում է հաշվետվություն Կանոնագրքի դրույթներին Բանկի հետևելու վերաբերյալ | Այո | |
| 15. | Արդյոք Խորհուրդը նշանակում և ազատում է գործադիր մարմնի ղեկավարին, ինչպես նաև ձևավորում է կոլեգիալ գործադիր մարմին (այդպիսին նախատեսված լինելու դեպքում), նշանակում և ազատում դրա անդամներին | Այո | |
| 16. | Արդյոք Խորհրդում ոչ գործադիր անդամները կազմում են մեծամասնություն, և արդյոք նրանցից առնվազն երկուսը անկախ են: | Այո | Խորհրդի բոլոր անդամները հանդիսանում են ոչ գործադիր անդամներ, Խորհուրդը ունի 2 անկախ անդամ |
| 17. | Խորհրդի հանձնաժողովները տարեկան մեկ անգամ անցկացնում են Բանկի ներքին կորպորատիվ փաստաթղթերի | - | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| | (կանոնադրություն, կանոնակարգեր և այլ)՝ իրենց իրավասության ոլորտին վերաբերվող դրույթների փորձաքննություն և համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում խորհրդին: | | |
| 18. | Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին: | - | |
| 19. | Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին, | - | |
| Խորհրդի անդամների նշանակումը | | | |
| 20. | Խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը ԲԸԺ-ին զուգակցված է առաջադրված թեկնածուի պաշտոնի նկարագրով և համառոտ կենսագրականով, որտեղ շարադրված են ստանձնելիք պարտականությունները, գործառույթները և կենսագրական տվյալները: | Այո | |
| 21. | Խորհրդի անդամների առաջադրված թեկնածուների պաշտոնի նկարագիրը և համառոտ կենսագրականները հրապարակվել | Այո | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| | են Բանկի ինտերնետային կայքում` ԲԸԺ-ից առնվազն 30 օր առաջ: | | |
| **Խորհուրդ. Գործունեության մոնիթորինգ** | | | |
| 22. | Խորհուրդը, համաձայն գնահատման քաղաքականության, դիտարկում է գործադիր մարմնի գործունեությունը: | Այո | Պատասխանատու` Խորհուրդ https://aeb.am/media/2017/12/260.pdf |
| 23. | Խորհուրդն իրականացնում է իր գործունեության արդյունավետության տարեկան գնահատում` համաձայն հաստատված գնահատման քաղաքականության: | Այո | |
| **Խորհրդի նիստերի հաճախելիությունը** | | | |
| 24. | Խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության մասին տվյալները ներառնված են ԿԿ Հայտարարագրի նկարագրական մասում և/կամ Բանկի տարեկան հաշվետվությունում: | Այո | |
| **Խորհրդի անդամների վերաբերյալ տվյալները** | | | |
| 25. | Ինչպես պահանջվում է Կանոնագրքով, տարեկան հաշվետվությունը և/կամ ԿԿ հայտարարագրի նկարագրական մասը մանրամասն տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների մասին: | Այո | |
| **Խորհրդի նիստերի տարեկան պլանը** | | | |
| 26. | Ցուցակված ընկերությունների և ՊԸ-ների խորհրդի նիստերը պետք է հրավիրվեն նվազագույնը եռամսյակը մեկ անգամ: | Այո | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| 27. | Խորհուրդի նիստերը գումարվում են համաձայն հաստատված տարեկան պլանի: Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին է ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ: | Այո | |
| **Խորհրդի նախագահը** | | | |
| 28. | Խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի պաշտոնները չեն համատեղվում: | Այո | |
| 29. | Բանկի կանոնադրությամբ հստակ տարանջատված են Խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի իրավասությունները: | Այո | *Կետեր՝ 6.28, 6.29-6.30* |
| 30. | Խորհրդի նախագահը պատասխանատու է, որպեսզի խորհրդի նորընտիր անդամները իրենց պաշտոնավարման սկզբում պատշաճ ծանուցվեն Բանկի և իրենց պարտականությունների մասին: Բանկն ունի խորհրդի անդամների համար նախատեսված ուսուցման ծրագրեր: | Այո | |
| ***Խորհրդի անդամների գործունեության վնասների ապահովագրումը և նրանց ազատումը պատասխանատվությունից*** | | | |
| 31. | Բանկի կանոնադրությունը դրույթներ է պարունակում խորհրդի անդամներին այն վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ, որոնք վրա են հասել նրանց պաշտոնական պարտականությունների իրականացման հետևանքով: Բանկը ապահովագրվել է Խորհրդի անդամների | Ոչ | *Կարգավորվում է գործող կարգերով և կանոնակարգերով, համաձայն օրենսդրության պահանջների* |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| | գործունեության վնասների ռիսկից: | | |
| **Աուդիտի հանձնաժողով** | | | |
| 32. | Ընկերությունները պարտավոր են ստեղծել խորհրդի ոչ-գործադիր անդամներից բաղկացած աուդիտի հանձնաժողով, որտեղ մեծամասնությունը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահը պետք է լինեն անկախ: | - | |
| 33. | Աուդիտի հանձնաժողովի բոլոր անդամները համապատասխան որակավորում ունեն ֆինանսների, հաշվապահության, աուդիտի և ներքին հսկողության հարցերում: | - | |
| 34. | Աուդիտի հանձնաժողովը հետևում է Բանկի ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանը և Բանկի ֆինանսական գործունեությանը վերաբերվող հայտարարություններին՝ դիտարկելով դրանցում տեղ գտած կարևոր պնդումները ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ, վերանայում եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և Խորհրդին ու ԲԸԺ-ին առաջարկություն ներկայացնում դրանց հաստատման վերաբերյալ: | - | |
| 35. | Աուդիտի հանձնաժողովը նվազագույնը տարեկան մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ քննարկելու աուդիտի հետ կապված հարցերը: | - | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| 36. | Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է վերանայելու Բանկի ներքին վերահսկողության, ներքին աուդիտի, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգերը: | - | |
| 37. | Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության, նրա աշխատանքի պայմանների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Խորհրդին, դրանք` ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը ներկայացնելու համար: | - | |
| 38. | Աուդիտի հանձնաժողովը մշակել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախության չափորոշիչներ | - | |
| 39. | Աուդիտի հանձնաժողովը, դիտարկել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը` համաձայն հաստատված չափորոշիչների, և արդյունքները ներառնվել են տարեկան հաշվետվությունում: | - | |
| 40. | Աուդիտի հանձնաժողովը պահում է իր նիստերի արձանագրությունները: | - | |
| Ներքին աուդիտ | | | |
| 41. | Ներքին աուդիտն իրականացնող անձը նշանակվում և ազատվում է Աուդիտի հանձնաժողովի համաձայնությամբ: | Ոչ | Ներքին աուդիտի անդամները նշանակվում և ազատվում են Խորհրդի կողմից |
| 42. | Ներքին աուդիտն իրականացնող անձը անմիջականորեն հաշվետու է Աուդիտի հանձնաժողովին: | Ոչ | Ներքին աուդիտը անմիջականորեն հաշվետու է Խորհրդին |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| 43. | Ներքին աուդիտն իրականացնող անձը իր գործունեությունն իրականացնում է համաձայն Աուդիտի հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան պլանի և այդ մասին պարբերաբար զեկուցում է Աուդիտի հանձնաժողովին: | Ոչ | Ներքին աուդիտը իր գործունեությունն իրականացնում է համաձայն Խորհրդի կողմից հաստատված տարեկան ծրագրի և այդ մասին պարբերաբար զեկուցում է Խորհրդին: |
| 44. | Ներքին աուդիտն իրականացնող անձը պատասխանատու է ներքին հսկողության լիարժեքության դիտարկման և ներքին հսկողության ընթացակարգերի իրականացման համար | Այո | |
| **Արտաքին աուդիտ** | | | |
| 45. | Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը չպետք է մատուցի Կանոնագրքի 28-րդ կետի 2) ենթակետի ոչ-աուդիտորական ծառայությունները: | Այո | *Խորհուրդ, Վարչություն* |
| 46. | Արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը հաստատվել է ԲԸԺ-ում: | Ոչ | Արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը հաստատվել է Խորհրդի կողմից՝ համաձայն գործող օրենսդրության պահանջների |
| 47. | Բանկն ունի արտաքին աուդիտն իրականացնող անձի ռոտացիայի քաղաքականություն: | Այո | *Բանկն ունի անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգ* |
| **Խորհրդի այլ հանձնաժողովները** | | | |
| 48. | Բանկը ստեղծել է Խորհրդի անդամներից բաղկացած այլ հանձնաժողովներ | Ոչ | Բանկում առկա է Աուդիտի հանձնաժողով: Խորհուրդը նպատակահարմար չի գտնում ձևավորել այլ հանձնաժողովներ, հաշվի առնելով իր թվաքանակը, քանզի միևնույն անդամները պետք է կրկնվեն հանձնաժողովներում: Ի տարբերություն դրա Խորհուրդը իրեն վերապահված գործառույթները ապահովում է, այդ թվում նաև պարբերական խորհրդակցությունների ձևաչափով՝ քննարկմանը ներառելով անհրաժեշտ մասնագետների և պաշտոնյաների: |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| 49. | Խորհրդի բոլոր հանձնաժողովները գործում են համաձայն իրենց կանոնակարգերի, որտեղ սահմանվում են դրանց գործառույթները, դերն ու պարտականությունները: | - | |
| 50. | Բանկի Խորհուրդը պետք է ստեղծի ռիսկերի կառավարման, ռազմավարական պլանավորման և ներդրումային հանձնաժողովներ՝ օժտված համապատասխան իրավասություններով: | - | Ռիսկերի կառավարման, ռազմավարական պլանավորման գործառույթներն իրականացնում է Բանկի Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչությունը, ներդրումային գործառույթները՝ Բանկի համապատասխան կառավարման մարմինները, Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը, Դիլինգ-կենտրոն վարչությունը |
| 51. | Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին: | - | |
| 52. | Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին: | - | |
| **Կորպորատիվ քարտուղար** | | | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| 53. | Բանկի խորհուրդը նշանակել է կորպորատիվ քարտուղար, որը հաշվետու է խորհրդին: Կորպորատիվ քարտուղարը աջակցում է խորհրդի նիստերի կազմակերպմանը, մասնավորապես նիստերի պլանավորմանը, հրավիրմանը, անցկացմանը և արձանագրության վարմանը՝ համաձայն օրենքների և Բանկի ընթացակարգերի: Խորհուրդը սահմանում է կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը, ինչպես նաև նրա վարձատրության չափը: | Այո | Բանկը կորպորատիվ քարտուղար չունի: Բանկի կորպորատիվ քարտուղարի գործառույթները վերապահվել են *Խորհրդի անդամ, Խորհրդի Քարտուղար Լուիզա Պետրոսյանին* |
| 54. | Կորպորատիվ քարտուղարը աջակցում է Խորհրդի նախագահին՝ դիտարկելու կորպորատիվ կառավարման ոլորտի ՀՀ օրենսդրության, Կանոնագրքի, Բանկի կանոնադրության և կանոնակարգերի պահանջները Բանկի կողմից կատարելը: | Այո | |
| **Տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը** | | | |
| **Տարեկան հաշվետվություն** | | | |
| 55. | Բանկը կազմել է հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը, որը ներկայացվել է բաժնետերերի հաստատմանը և հրապարակվել է Բանկի ինտերնետային կայքում: | Այո | |
| 56. | Տարեկան հաշվետվությունը պարունակում է ֆինանսական հաշվետվություն՝ կազմված ֆինանսական | Այո | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| | հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: | | |
| 57. | Տարեկան հաշվետվությունը պարունակում է Բանկի շահառուներին հասցեագրված տեղեկատվությունը, որը հնարավորություն է տալիս գնահատել Բանկի ներդրումը տնտեսական կայունության, սոցիալական բարեկեցության և բնապահպանական անվտանգության ապահովման գործում: | Այո | |
| 58. | Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություն Բանկի վարքագծի կանոնների վերաբերյալ և հղում Բանկի ինտերնետային կայքին, որտեղ այն տեղադրված է: | Այո | https://aeb.am/media/2020/06/4391.pdf |
| 59. | Տարեկան հաշվետվությունը պարունակում է ԿԿ Հայտարարագիրը Կանոնագրքին հետևելու և/կամ մանրամասն բացատրությունը՝ չհետևելու և դրա պատճառների մասին | Այո | |
| 60. | Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ Բանկի հետ փոխկապակցված անձանց հետ կնքված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքների մասին, որոնց արժեքը գերազանցում է Բանկի ակտիվների արժեքի 2 տոկոսը՝ մանրամասն ներկայացնելով այդպիսի գործարքների հաստատման կամ վավերացման համար Բանկի կողմից ընդունված քաղաքականությունը և ընթացակարգերը: Բանկի և փոխկապակցված անձանց միջև փոխկապակցված | Ոչ | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք<br><br>հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| | այդպիսի գործարքների առկայության դեպքում նաև պետք է ներկայացնել Բանկի գործարքներում փոխկապակցված անձանց գործարքների համամասնությունը, փոխկապակցված անձանց յուրաքանչյուր խմբի գործարքները, փոխկապակցված անձանց գործարքների պայմանների արդարության գնահատումը: Բանկի և փոխկապակցված անձանց միջև այդպիսի գործարքների բացակայության դեպքում պետք է հստակ նշվի այդ մասին: | | |
| 61. | Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը: | Այո | |
| 62. | Տարեկան հաշվետվությունը ներառում է Բանկի նշանակալից (10%-ից ավելի) բաժնետոմսերին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը: | Ոչ | Բանկի նշանակալից (10%-ից ավելի) բաժնետոմսերին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը տեղակայված է ինտերնետային կայքում. https://www.aeb.am/hy/significant_participants/ |
| 63. | Տարեկան հաշվետվությունը ներառում է Բանկի փոխկապակցված անձանց ցուցակը և փոխկապակցված անձանց հետ կնքված այն գործարքների ցանկը, որոնց արժեքը գերազանցում է Բանկի ակտիվների արժեքի 2 տոկոսը: | Ոչ | |
| 64. | Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, այդ թվում անկախ անդամների անունները և հակիրճ կենսագրությունը, այդ թվում տարվա ընթացքում հրաժարական տված և պաշտոնից հեռացված խորհրդի | Ոչ | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| | անդամների անունները, տարվա ընթացքում խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած բոլոր անձանց վարձատրության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև խորհրդի նիստերին նրանց մասնակցության վերաբերյալ տվյալները: | | |
| 65. | Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները: | Ոչ | Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձի անունը և աուդիտորական հաշվետվությունը |
| 66. | Տարեկան հաշվետվությունը ներառում է Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի նկարագրությունը, այդ թվում՝ դուստր ընկերությունների, մասնաճյուղերի, մայր Բանկի, ինչպես նաև քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը փոխկապակցված այլ ընկերությունների հետ: | Ոչ | Տարեկան հաշվետվությունը ներառում է Բանկի մասնաճյուղերի ցանկը<br>Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը տեղակայված է ինտերնետային կայքում.<br>https://www.aeb.am/media/2019/11/3126.pdf |
| 67. | Տարեկան հաշվետվությունը ներառում է Տնօրենի ամփոփիչ հաշվետվությունը նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, ռիսկային գործոնները, գալիք տարվա հեռանկարները, Բանկի ռազմավարությունը, տարվա ընթացում կնքված խոշոր գործարքները, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր փոփոխությունները, բացատրություն նախորդ տարվա ցուցանիշների հետ համեմատած ֆինանսական արդյունքների կարևոր փոփոխությունների վերաբերյալ, շահույթի տեղաբաշխման և | Այո | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| | բաշխման, այդ թվում շահութաբաժինների վճարման առաջարկությունները: | | |
| 68. | Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի վարձատրությունը: | Ոչ | |
| 69. | Տարեկան հաշվետվությունը ներառում է թողարկված բաժնետոմսերի քանակը և դասը կամ դասերը, և արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքների ամփոփումը: | Այո | Բանկը թողարկել է սովորական և արտոնյալ բաժնետոմսեր: Արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքները սահմանված են կանոնադրությամբ https://aeb.am/media/2020/08/4652.pdf |
| **Բանկի ինտերնետային կայքը** | | | |
| 70. | Բանկը ունի ինտերնետային կայք, որտեղ առանձին բաժին նվիրված է կորպորատիվ կառավարմանը: | Այո | |
| 71. | Բանկի ինտերնետային կայքը պետք է պարունակի վերջին 3 տարիների ԿԿ Հայտարարագրերը: | Այո | |
| 72. | Ինետնետային կայքը, կորպորատիվ կառավարման բաժինը և այնտեղ տեղադրված փաստաթղթերը հասանելի են նաև օտար լեզվով: | Այո | |
| 73. | Բանկի կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են ընկերության պետական գրանցման վկայականը և կանոնադրությունը՝ բոլոր գործող փոփոխություններով հանդերձ: | Այո | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| 74. | Բանկի կայքի կորպորատիվ կառավարման բաժինը տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների և գործադիր մարմնի վերաբերյալ՝ ներառելով նրանց համառոտ կենսագրականները և պաշտոնի նկարագրերը: | Այո | Բանկի կայքը տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների և գործադիր մարմնի վերաբերյալ՝ ներառելով նրանց համառոտ կենսագրականները և պաշտոնի նկարագրերը. https://www.aeb.am/hy/bank_management/ |
| 75. | Բանկի կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են խորհրդի, խորհրդի հանձնաժողովների Կանոնակարգերը և կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը: | Ոչ | |
| 76. | Բանկի կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է խորհրդի տարեկան գնահատման քաղաքականությունը: | Ոչ | |
| 77. | Բանկի կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են նախորդ 5 տարիների ԲԸԺ-երի նիստերի արձանագրությունները: | Այո | Բանկի կայքում տեղադրված են նախորդ 5 տարիների ԲԸԺ-երի Հաշվիչ հանձնաժողովի նիստերի արձանագրությունները: https://www.aeb.am/hy/owners/ |
| 78. | Բանկի կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է հաստատված շահութաբաժինների վճարման քաղաքականությունը: | Այո | Բանկի կայքում տեղադրված է հաստատված շահութաբաժինների վճարման քաղաքականությունը https://aeb.am/media/2021/04/5492.pdf |
| 79. | Բանկի կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված Բանկի կառուցվածքը և բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը: | Այո | Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը տեղակայված է ինտերնետային կայքում. https://www.aeb.am/hy/organizational_chart/ |
| 80. | Բանկի կայքի կորպորատիվ կառավարման բաժնում | Այո | Բանկի կայքում տեղադրված են Բանկի նախորդ 3 տարիների տարեկան հաշվետվությունները |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| | տեղադրված է Բանկի նախորդ 3 տարիների տարեկան հաշվետվությունները: | | https://www.aeb.am/hy/hashvetvutyunner/ |
| **Վարքագծի կանոններ** | | | |
| 81. | Բանկը ընդունել է վարքագծի կանոններ: | Այո | https://www.aeb.am/hy/mission_values_rules/ |
| 82. | Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում կորպորատիվ արժեքների, գործարար վարքագծի, պետության և պաշտոնատար անձանց հետ հարաբերությունների, ինչպես նաև մրցակիցների հետ հարաբերությունների մասին: | Այո | https://www.aeb.am/hy/mission_values_rules/ |
| 83. | Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում «ահազանգումների», վարքագծի կանոնների խախտման, ինչպես նաև այդ խախտումների մասին հաղորդելիս գաղտնիության պահպանման մասին: | Այո | |
| 84. | Բանկը նշանակել է պաշտոնյա, ով պատասխանատու է վարքագծի կանոններին հետևելու մոնիթորինգի համար: | Ոչ | |
| **Կանոնադրական կապիտալի ավելացումը** | | | |
| 85. | Կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումների մասին Խորհուրդը անհապաղ տեղեկացրել է բոլոր բաժնետերերին: | Այո | Գործող օրենսդրության համաձայն, բանկի կանոնադրությամբ սահմանվում է հայտարարված բաժնետոմսերի քանակը, որի ներքո բանկի Խորհուրդը կարող է իրականացնել բաժնետոմսերի բաց տեղաբաշխում համաձայն գործող կարգերի և օրենսդրության պահանջների: |
| **Ծախսուներ** | | | |
| 86. | Խորհուրդը սահմանել է այն ծախսումների շրջանակը, որոնք | Ոչ | |

| | Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց | Այո/Ոչ | Մեկնաբանություններ/Բացատրություն |
|---|---|---|---|
| | համապատասխանում են Բանկի գործունեությանը, օրինական շահեր և սպասելիքներ ունեն Ընկերությունից: | | |
| 87. | Բանկը ընդունել քաղաքականություն՝ միտված շահառուների շահերը և սպասելիքները հաշվի առնելուն: | Այո | ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաճախորդների դիմում-բողոքների և բողոքների ընդունման, քննարկման և որոշումների կայացման» կարգ, https://aeb.am/media/2021/06/5662.pdf , Օմբուդսմեն՝ Վրեժ Ջհանգիրյան |
| 88. | Խորհուրդը մշակել և բացահայտել է շահառուների հետ հարաբերությունների հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը և տարեկան կտրվածքով բացահայտում է դրանց իրականացումը: | Այո | |
| 89. | Շահառուների համար հասանելի են Բանկի ինտերնետային կայքի՝ տարեկան հաշվետվություններին և կորպորատիվ կառավարմանը վերաբերող բաժինները: | Այո | |